# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀԿԳՄՄՆԲՄԱՊՁԲ-20/1

ք. Երևան

«30» «01» 2020թ.

**Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղարի տեղակալ՝ Վ. Գասպարյանի**, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Լուառ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Քանանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին :

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 79300000 (յոթանասունինը միլիոն երեք հարյուր հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուը նվազեցնելու այդ գինը:

3.2 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[32] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի

---

[32] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն | <<Լուար>> ՍՊԸ |
| Ք. Երևան, Կառավարական տուն 2 | Ք. Երևան, Վարդանանց 109/21 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ |
| Հ/Հ | Հ/Հ 1150017953983954 |
| ՀՎՀՀ 02698732 | ՀՎՀՀ 02632162 |
| Գլխավոր քարտուղարի տեղակալ՝ | Տնօրեն՝ |
| ---------- Վ. Գասպարյան | ---------- Ա. Քանանյան |
| /ստորագրություն/ Կ.Տ | /ստորագրություն/ Կ.Տ |

Հավելված N 1
«30» 01 2020թ. կնքված
ՀՀԿԳՄՄՆԲՄԱՊՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| Ապրանքի | | | | | | | ՀՀ դրամ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքայի ն նշանը, ֆիրմային անվանում և արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | քանակը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | մատակարարման Ժամկետը |
| 1 | 18411900/504 | Սպորտային հագուստ, կոշիկ և այլ պարագաներ | Givova, Givova, Gianto Srl | **Նախատեսվում է ձեռք բերել սպորտային հագուստ, կոշիկ և այլ պարագաների լրակազմ:** Յուրաքանչյուր լրակազմ բաղկացած է ութ անվանում ապրանքից՝ մեկ շքերթային մարզահագուստից, մեկ սպորտային շապիկից (պոլո), մեկ բաճկոնից, մեկ շորտիկից, մեկ զույգ հողաթափից և մեկ զույգ սպորտային կոշիկից (բոթաս), մեկ սպորտային գլխարկից, մեկ սպորտային պայուսակից:<br>**1. Շքերթային մարզահագուստ**<br>Այն բաղկացած է պիջակից և տաբատից: Բաղադրությունը՝ 100 % պոլիեստեր, մոդելը՝ շքերթային, գոտկատեղի հատվածում ազատ կարվածքի, պիջակի գույնը՝ բաց կապույտ, մուգ կապույտի համադրությամբ, կրծքավանդակի վրա V-ձև մուգ կապույտ դեկորատիվ ներդիր տաբատը՝ մուգ կապույտ: Օձիկի ներսի հատվածում՝ արտադրողի ֆիրմայի անվանումը՝ սպիտակ, չափսերը՝ երկարությունը՝ 11,5 սմ, բարձրությունը՝ 1,5 սմ: Պիջակի դիմացի ձախ կողմում կրծքավանդակի վրա Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ գործարանային ասեղնագործված, գունավոր, տրամագիծը՝ առնվազն 7,5 սմ, աջ կողմում կրծքավանդակի վրա արտադրողի ֆիրմայի անվանումը՝ | լրակազմ | 650 | 122000 | 79300000 | Նախատեսվում է գնել 2020թ՝ համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 20-րդ օրացուցային օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնվում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | սպիտակ, չափսերը՝ երկարությունը՝ 11,5 սմ, բարձրությունը՝ 1,5 սմ: Աջ թևի վրա ՀՀ դրոշը գործարանային ասեղնագործված, լայնությունը՝ առնվազն 8 սմ, բարձրությունը՝ առնվազն 4 սմ: Ձախ թևի երկայնքով՝ արտադրողի ֆիրմայի անվանումը սպիտակ գույնի: Մեջքի վրա ARMENIA գրառումը,՝ գրառման չափսերն են՝ լայնությունը առնվազն 30 սմ, բարձրությունը առնվազն 5 սմ, տառերի հաստությունը առնվազն 1 սմ: Դաստակների մասում՝ կտորե ռեզին:<br>Պիջակը կայծակ-ճարմանդով է՝ երնացող, կայծակ-ճարմանդի մեկ բռնակրով, երկու գրպաններով:Պիջակի գրպանները չերնացող կայծակ-ճարմանդով: Տաբատի գոտքատեղի ռետինի երկայնքով՝ անցկացված ամրացնող քողով: Տաբատի գրպանները չերնացող կայծակ – ճարմանդով: Տաբատի աջ գրպանի հատվածում արտադրողի ֆիրմայի անվանումը ՝ 11,5 x 1.5 սմ չափսից ոչ ավել, սպիտակ գույնի, ձախ գրպանի տակից Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ գործարանային ասեղնագործված, գունավոր, տրամագիծը՝ առնվազն 7,5 սմ, տաբատը երկու գրպաններով, ձախ ոտքի երկայնքով՝ արտադրողի ֆիրմայի անվանումը սպիտակ գույնի, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից WIPO ապրանքային նշանների միջազգային բազայում գրանված:<br>**2.Սպորտային շապիկ (պոլո)**<br>100 % միկրոֆիբր, գույնը մուգ կապույտ, ձախ ներքևի հատվածում արտադրողի ֆիրմայի անվանումը ՝ 11,5 x 1.5 սմ չափսից ոչ ավել, սպիտակ գույնի, գրպանները չերնացող կայծակ-ճարմանդով, ձախ գրպանի տակից Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ գործարանային ասեղնագործված, գունավոր, տրամագիծը՝ առնվազն 7,5 սմ, մեկ բաց գրպանով, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից WIPO ապրանքային նշանների միջազգային բազայում գրանված:<br>**3.Բաճկոն**<br>100 % նեյլոն, գույնը՝ մուգ կապույտ, | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կրծքավանդակի վրա V-ձև բաց կապույտ դեկորատիվ ներդիր, կրծքավանդակի աջ կողմում ուսագլխից առնվազն 17 սմ ներքևամասում արտադրողի առևտրային անվանումը, չափսերը՝ երկարությունը՝ 11,5 սմ, բարձրությունը՝ 1,5 սմ, ձախ կողմում գործարանային ասեղնագործված Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ գունավոր, տրամագիծը՝ առնվազն 7,5 սմ: Մեջից ձախ հատվածում ներքին գրպան: Աջ թևի վրա գործարանային ասեղնագործված ՀՀ դրոշը, չափսերը՝ լայնությունը՝ առնվազն 8 սմ, բարձրությունը՝ առնվազն 4 սմ: Գոտկատեղի երկայնքով՝ անցկացված ամրացնող քողով: Ներքևի հատվածում երկկողմյա գրպանները չերևացող կայծակ-ճարմանդով, հիմնական կայծակ-ճարմանդը՝ երևացող, տաք ամրակցված գլխարկով (կապիշոն), ջերմապաշտպանիչ շերտը սինտեպոն՝ խտությունը 230 գ/մ2, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից WIPO ապրանքային նշանների միջազգային բազայում գրանված:<br>**4.Շորտ**<br>100 % միկրոֆիբր, գույնը մուգ կապույտ, ձախ ներքևի հատվածում արտադրողի ֆիրմայի անվանումը՝ 11,5 x 1.5 սմ չափսից ոչ ավել, սպիտակ գույնի, ձախ գրպանի տակից Հայաստանի Հանրապետության զինանշանը՝ գործարանային ասեղնագործված, գունավոր, տրամագիծը՝ առնվազն 7,5 սմ, երկու կայծակ-ճարմանդով գրպաններով, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից WIPO ապրանքային նշանների միջազգային բազայում գրանված:<br>**5. Սպորտային կոշիկ (բոթաս)**<br>Մոդելը կլասիկ, կարված կոմբինացված նյութերից՝ վերև՝90 % պլաստիկ պոլիուրետանե 10 % հատուկ շնչող ցանց, ներքև՝ 25 % սինթետիկ և 75 % հատուկ շնչող ցանց, գույնը սևի և սպիտակի համադրությամբ, սուպինատորով, յուրաքանչյուր գույգի դրսի կողմից արտադրողի առևտրային տարբերանշանով,տակացուի ետնամասի | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | կողային հատվածում 8սմ երկարությամբ և 2 սմ բարձրությամբ սև գույնի ռեզինե հատված, քուղերը /շնուրոկ/ սև գույնի, կոշկատակը հատուկ ամրության ռետինից՝ սպիտակ գույնի, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից WIPO ապրանքային նշանների, միջազգային բազայում գրանցված:<br>**6. Հողաթափ**<br>Պատրաստված հատուկ ամրության վուլկանացված ռետինից, հողաթափի վերին բռնակները հարթ ռետինե գոտիով՝ դրսի հատվածում արտադրողի տարբերանշանով, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից WIPO ապրանքային նշանների միջազգային բազայում գրանված:<br>**7.Սպորտային գլխարկ**<br>100 % բամբակ, գույնը մուգ կապույտ, ձախ կողմում "ARMENIA" գրառումը, գրառման չափսերն են՝ լայնությունը առնվազն 5 սմ, բարձրությունը առնվազն 1 սմ, տառերի հաստությունը առնվազն 0,2 սմ, աջ մասում գործարանային ասեղնագործված արտադրողի առևտրային անվանումը, հետնամասում չափսի շարժական կարգավորիչ, կարգավորիչի վրա գործարանային ասեղնագործված արտադրողի առևտրային անվանումը ապրանքանիշի իրավատիրոջ կողմից WIPO ապրանքային նշանների միջազգային բազայում գրանված:<br>**8.Սպորտային պայուսակ**<br>100 % պոլիէստեր, բռնակները ինքնակպչուն, "ARMENIA" գրառումով, գրառման չափսերն են՝ լայնությունը առնվազն 30 սմ, բարձրությունը առնվազն 5 սմ, տառերի հաստությունը առնվազն 1 սմ, չափսը՝ 57 x 26,5 x 25,5 սմ, կողքի մեծ գրպանով, դիմային հատվածում գտնվող արտադրողի առևտրային տարբերանշանով, կողքային հատվածներում՝ արտադրողի փոքր առևտրային տարբերանշաններով, ուսային հատուկ ուսադիրով՝ արտադրողի առևտրային տարբերանշանով, ապրանքանիշի իրավատիրոջ կողմից WIPO ապրանքային նշանների միջազգային բազայում գրանված: | | | | | |

Ծանոթություն.

1. Սպորտային հագուստ, կոշիկ և այլ պարագաների 650 լրակազմը պետք է բաղկացած լինի.
   - 650 հատ Շքերթային համազգեստից, որից՝ XS չափսի - 30 հատ, S չափսի - 125 հատ, M չափսի - 165 հատ, L չափսի - 148 հատ, XL չափսի - 100 հատ, XXL չափսի - 50 հատ, XXXL չափսի - 20 հատ, XXXXL չափսի - 12 հատ:
   - 650 Սպորտային շապիկից (պոլո), որից՝ XS չափսի - 30 հատ, S չափսի - 125 հատ, M չափսի - 165 հատ, L չափսի - 148 հատ, XL չափսի - 100 հատ, XXL չափսի - 50 հատ, XXXL չափսի - 20 հատ, XXXXL չափսի - 12 հատ:
   - 650 Բաճկոնից, որից՝ XS չափսի - 30 հատ, S չափսի - 125 հատ, M չափսի - 165 հատ, L չափսի - 148 հատ, XL չափսի - 100 հատ, XXL չափսի - 50 հատ, XXXL չափսի - 20 հատ, XXXXL չափսի - 12 հատ:
   - 650 Շորտից, որից՝ XS չափսի - 30 հատ, S չափսի - 125 հատ, M չափսի - 165 հատ, L չափսի - 148 հատ, XL չափսի - 100 հատ, XXL չափսի - 50 հատ, XXXL չափսի - 20 հատ, XXXXL չափսի - 12 հատ:
   -650 Սպորտային կոշիկից (բոթաս), որից՝ 36 չափսի - 10 զույգ, 37 չափսի - 20 զույգ, 38 չափսի - 35 զույգ, 39 չափսի - 85 զույգ, 40 չափսի - 100 զույգ, 41 չափսի - 110 զույգ, 42 չափսի - 125 զույգ, 43 չափսի - 95 զույգ, 44 չափսի - 30 զույգ, 45 չափսի - 30 զույգ, 46 չափսի -10 զույգ:
   -650 Հողաթափից, որից՝ 36 չափսի - 10 զույգ, 37 չափսի - 20 զույգ, 38 չափսի - 35 զույգ, 39 չափսի - 85 զույգ, 40 չափսի - 100 զույգ, 41 չափսի - 110 զույգ, 42 չափսի - 125 զույգ, 43 չափսի - 95 զույգ, 44 չափսի - 30 զույգ, 45 չափսի - 30 զույգ, 46 չափսի - 10 զույգ:
   -650 Սպորտային գլխարկից:
   - 650 Սպորտային պայուսակից:
2. Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված:
3. Ապրանքների փոխադրումը և բեռնաթափումը իրականացվում է կատարողի կողմից՝ ամբողջ քանակը հանձնելով ՀՀԿԳՄՍ նախարարության սպորտի բարձրագույն նվաճումների քաղաքականության վարչությանը:
4. Պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտություն:
5. Լրակազմի մեջ ներառված ապրանքները պետք է լինեն նույն ապրանքային նշանի:
6. Ապրանքի տեխնիկական բնութագրում որևէ առևտրային նշանին, ֆիրմային անվանմանը կամ մոդելին հղումներ հանդիպելու դեպքում վերջինից հետո կարդալ «կամ համարժեք» բառերը:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ----------Վ. Գասպարյան | ----------Ա. Քանանյան |
| /ստորագրություն/Կ.Տ | /ստորագրություն/Կ.Տ |

*Հավելված N 2*

*«30» 01 2020թ. կնքված*
*ՀՀԿԳՄՄՆԲՄԱՊՁԲ-20/1 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ի պետական բյուջեից համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | Հազ. դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Դեկտեմբեր /մինչև 30-ը/ | Ընդամենը |
| 1 | 18411900/504 | Սպորտային հագուստ, կոշիկ և այլ պարագաներ | | | | | | | | | | | | | 79300.0 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

----------Վ.Գասպարյան
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

----------Ա. Քանանյան
/ստորագրություն/ Կ.Տ